«ԿՈՏԱՅՔԻ ԵՎ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ԿԿԹԿ» ՍՊԸ

“KOTAYKI EV
GEGHARKUNIKI
KKTK” LLC

ՏՆՕՐԵՆ

Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան,
Կենտրոն թ., Սահմանադրության հր. 1
ՀՎՀՀ 03021779
Հեռ. 060698161
Էլ.փոստ՝info@swm.am

«05» նոյեմբերի 2025թ.
N01/1105

Զվարթ Գասպարյան» ԱՁ-ին
(ՀՎՀՀ 43258111, էլ հասցե mush.harutyunyan@hotmail.com)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
/Պայմանագիրը միակողմանի ամբողջական լուծելու մասին/

«Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) և «Զվարթ Գասպարյան» ԱՁ-ի միջև (այսուհետ՝ Կատարող) 15.08.2025 թվականին կնքվել է N «ԿԳ-ԿԿԹԿ-ԳՀԾՁԲ-26/25» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), իսկ 25.08.2025թ. կնքվել է 2025թ. մատուցվող ծառայությունների մասով ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու վերաբարյալ N 1 համաձայնագիր, համաձայն որոնց՝ Կատարողը ստանձնել է Ծրագրային համակարգի ներդրման և սպասարկման ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություն կամ Ծրագիր)՝ մատուցման պարտավորություն՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1. 1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատուցել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-

ժամանակացուցով նախատեսված Ծառայությունը, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ :

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Ծրագրի ներդրման ժամկետ է սահմանվում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված **60 օրվա ընթացքում**, իսկ հետագա սպասարկումը՝ 36 ամիս:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

<< քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, Ծառայությունների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

<< քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:»:

<< քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, Ծառայությունների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում **է լուծված կամ փոփոխված**:

Պայմանագրի Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցի համաձայան Կատարողը պայմանագիրը կնքելուց օրվանից հաշված 60 օրվա ընթացքում՝ մինչև 23.10.2025թ. ներառյալ, պետք է Պատվիրատուի մոտ ներդներ ծրագիրը և հետագա 36 ամսում սպասարկեր այն: Պայմանագրի կնքման օրվանից մինչև 23.10.2025թ. Պատվիրատուի համապատասխան մասնագետները և ստորաբաժանումները Կատարողի հետ ունեցել են բազմաթիվ քննարկումներ ինչպես առկա, այնպես էլ հեռավար տարբերակներով՝ ծրագիրը Պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ստեղծման և ներդրման համար, սակայն Կատարողը մինչև սույն կետով նշված ժամկետի ավարտը չի իրականացրել Պատվիրատու մոտ ծրագրի ներդնումը:

Կատարողը 15.10.2025թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին, որտեղ ներկայացրել է, որ համակարգը սպեցիֆիկ է և պահանջում է օպտիմալացում՝ կազմակերպության կոնկրետ կարիքների համապատասխան՝ երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը 3 շաբաթով: Ներկայացված գրությունը Պատվիրատուի կողմից չի համարվել հիմնավոր, քանի դեռ Պայմանագրի կատարման ժամկետի ավարտին կար դեռ 36 (երեսունվեց) ամիս:

Պայմանագրի 7.6 կետի համաձայն՝ Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Ծրագրի ներդրման ժամկետի ավարտի հաջորդ օրը՝ 24.10.2025թ. Պատվիրատուն գրությամբ դիմել է Կատարողին՝ տրամադրելով 5/հինգ/ օր ողջամիտ ժամկետ՝ Ծրագրի ներդնման համար, սակայն նշված նշված ժամկետի ավարտից երկու օր անց Կատարողը

գրությամբ դիմել է Պատվիրատուն՝ հայտնելով, որ ծրագրի համակարգի պատրաստականության մակարդակը ներկայումս գերազանցում է 70%, ուստի հիմնավոր և համաչափ է համարվում պայմանագրի կատարման ժամկետի երկարաձգումը 8 շաբաթով, ինչը հակասում է պայմանագրի 7.6 կետին և դրանով իսկ Կատարողը հայտնել է, որ ծրագիրը ամբողջությամբ պատրաստ չէ, այլ պատրաստ է դրա միայն 70%, որը Պատվիրատուի համար չի կարող համարվել ընդունելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, որ Կատարողը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Պատվիրատուն առաջնորդվելով Պայմանագրի 2.1.3 կետի Բ ենթակետով՝ միակողմանի և ամբողջական լուծում է N ԿԳ-ԿԿԹԿ-ԳՀԾՁԲ-26/25 ծածկագրով պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորած մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն

ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները Պատվիրատուի «ԱՄԻՕԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ **1150013931521518** փոխանցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալն՝ առաջարկում ենք N Պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 2 499 000 (երկու միլիոն չորս հարյուր իննսունինը հազար) ՀՀ դրամ և որակավորման ապահովման գումարը 3 749 850 (երեք միլիոն յոթ հարյուր քառասունինը հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, փոխանցել Պատվիրատու ի «ԱՄԻՕԲԱՆԿ» ՓԲԸ Հ/Հ 1150013931521518 հաշվեհամարին:

Տեղեկացնում ենք, որ եթե վճարման ենթակա գումարները սույն ծանուցումը ստանալու պահից հաշված **8 /ութ/ օրվա** ընթացքում փոխանցվի նշված հաշվեհամարին, ապա Կատարողի նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով նախատեսված դրույթները:

ԱՌԴԻՐ՝ Էլեկտրոնային խտանիշք

Հարգանքով՝ Սերգեյ Համբարձումյան